

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ**

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, Կապանի Շահումյան 20/32, 3301:  
Հեռ.՝ (+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:  
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468 19024 >

9 771829 346006

ՉՈՒԹՅԱՐԹԻ, 4 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2019Թ. № 24 (514)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

**Դեռ ինչքան պիտի թուխար խտանա, Եվ բացվող օրը հոնքերը կիտի...**

Համո Սահյան



## «Դարեր գաղթել ենք, հիմի է՛լ գաղթենք»

**ՍՈՒՐԵՆ ՎԱՐՈՒՆՅԱՆ**



Այս երեւոյթը մարդկությանը հայրնի է քրիստոնեւոյնից հազարամյակներ առաջ: Մարդկային հասարակոյթան համար այն ունեցել է ե՛ւ դրական, ե՛ւ բացասական հետեւանքներ:

Գաղթը, ցավոք, մեր ժողովրդի համար միշտ էլ նշանավորվել է բացասական առումով: Հայկական սովետական հանրագիտարանում կարդում ենք. «Հայերի առաջին խոշոր գաղթը տեղի է ունեցել 368-369-ին: Միջին դարերում հայերը գաղթել են հատկապես Բյուզանդիա: Բյուզանդական Մորիկ կայսրը (582-602), Սեբեոսի վկայությամբ, ««Հայաստանը առանց հայերի» տխրահռչակ քաղաքականութան սկիզբն է դրել»:

« Գաղթ / լատ.migratio - գաղթ, վերաբնակեցում՝ բնակչութան բռնի կամ կամավոր տեղաշարժը մի երկրից մյուսը կամ նույն երկրի ներսում:

«1604թ. Իրանի Շահ Աբաս առաջինը...մոտ 300 հազար մարդ բռնի գաղթեցրեց Իրանի ներքին նահանգներ»:

«Հայ ժողովրդի արտագաղթը մեծագույն չարիք է: Բնակչութունից զրկվեցին երկրի շատ գավառներ, հայ բնակչութունն ավելի նորացավ, տկարացավ և երկար ժամանակ զրկվեց պաշտպանունակութունից, իր ինքնուրույնութան համար պայքարելու ունակութունից»: /ՀԱՅ, հ-2, էջ-668/:

«Սոնդոյների, հետագայում թուրքական ցեղերի քաղաքականութունը, ծանր հարկերը անեցիներին և Հայաստանի այլ քաղաքների բնակիչներին ստիպեցին տարբեր ժամանակներում մեծ խմբերով գաղթել օտար երկրներ...»:

«Երեւանի արձանագրութուններից մեկում անեցի Շաքարյիլը 1364-ին անիծում է Անին քանդողներին»:/ՀԱՅ, հ-1, էջ-408/:

Եվ այսպես, բռնի տեղահանութուններն անընդհատ մեզ ուղեկցել են՝ բզկտել, ծվատել երկիրը, ու հայ տարրը փոխարինվել է օտարով՝ հիմնականում մահմեդականով:

1915-1923 թթ. թուրքական իշխանութունների կազմակերպած եղեռնը՝ կոտորածներն ու բռնագաղթը մեր պատմական հայրենիքի 9/10 մասը լիովին դատարկեցին հայ բնակչութունից, և այնտեղ տեր ու տիրական դարձան մահմեդական թուրքն ու քուրդը:

Հայութունը լիովին դարձավ աշխարհափոյուռ, մի փոքր մասն էլ հավաքվեց ու կենտրոնացավ հայրենի հողի 1/10 մասի վրա, որ

## Կապանը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք. շնորհավորում ենք

## Իմ այս խոսքը կարելի է վերնագրել՝ բուհերում հայոց լեզվի պարտադիր դասավանդման մասին

**Մեր ժամանակ, երբ միջնակարգ կրթությունը փաստամյա էր, 5-րդ ու 6-րդ դասարաններում անցնում էինք ձեռաբանություն (հայոց լեզվի ուղղագրություն), իսկ 7-րդ և 8-րդ դասարաններում անցնում էինք հայոց լեզվի շարահյուսություն և... վերջ:**

9-րդ ու 10-րդ դասարաններում անցնում էինք հայ գրականություն միայն, բայց մեզ նշանակում էին նաև հայոց լեզվի կիսամյակային գնահատականներ՝ հիմք ընդունելով շարադրություններում առկա հայոց լեզվի մեր իմացությունը ներկայացնող գնահատականները:

Շարադրությունները գնահատվում էին հինգ բալային համակարգով. երկու թվանշանով: Շարադրության տակ դրվում էր, օրինակ՝ այսպիսի գնահատական՝ 5/5, որոնցից մեկը հայ գրականության գիտելիք էր գնահատում, մյուսը՝ հայոց լեզվին տիրապետելու մակարդակը: Դա հեռավոր 1971 և 1972 թվականներին էր...

Խորհրդային Հայաստանի բոլոր բուհերում ընդունելության քննությունների մեջ ներառված էր նաև հայոց լեզվից գրավոր շարադրություն: Անձամբ ես ընդունվել եմ ֆիզիկայի ֆակուլտետ՝ հանձնելով հայոց լեզվից

գրավոր շարադրության քննություն ու դրանից հետո ուսանել եմ միայն մասնագիտական առարկաներ: Իրականության դեմ չմեղանչելու համար՝ ասեմ, որ այդ տարիներին պարտադիր դասավանդվում էին նաև այնպիսի առարկաներ, որոնք պահովում էին խորհրդային համակարգի քարոզչությունը. գիտական կոմունիզմ, ՍՄԿԿ պատմություն...

Փաստորեն 8-րդ դասարանից հետո մեզ դպրոցում հայոց լեզու չէին դասավանդում, բայց այդ համակարգում ստացած իմ գիտելիքներն ինձ բավարարում են բավականին կիրթ ու գրագետ գրավոր խոսք ուղղել ցանկացած տիպի լսարանի, եւ դա, կարելի է ասել, անում եմ մինչև 8-րդ դասարանը ստացած հայոց լեզվի գիտելիքների պաշարով. իհարկե, ընթերցանությունն էլ, որ ինքնակրթության բաղկացուցիչ բաղադրիչ պիտի համարել, իր դրական ազդեցությունն է ունեցել իմ լեզվական գիտելիքների խորացման մեջ:

Այնպես որ՝ հայոց լեզվի շուրջ ծավալված այս վեճն իմ անցած կրթական համակարգի տեսանկյունից բավականին ծիծաղելի է:

Առանց լուրջ փորձագետների մասնակցության՝ անգրագետների թեթև ձեռքով բոլոր կրթական ծրագրերը ոչնչացրել եք ու խրվել ձախճի մեջ:

Դպրոցներում առարկաների դասավանդման իրականությունից բոլորովին անտեղյակ,



իրենց կյանքում երբեք մի երեխայի դաս չսովորեցրած որոշ «գրանտակերներ» դպրոցների համար դասագրքեր են «գրել» ու կրթության վիճակն էս օրին հասցրել...

Ու քանի ուշ չէ՝ մտածեք էս ողբալի վիճակից կրթական համակարգը փրկելու մասին, ոչ թե կեղծ ու խառնակիչ օրակարգերով ելույթներ ունեցեք...

**ՏԻԳՐԱՆ ՎՐԻԳՈՐՅԱՆ**



# Նոր պոչամբարը դառնալու է Լրացուցիչ եւս մեկ սպառնալիք.

## ԶՊՄԿ-ն նախատեսում է նոր պոչամբար կառուցել անմիջապես Ողջի գետի եզրին

«Նոր պոչամբարի կառուցումը նոր վտանգներ է առաջ բերելու: Առհասարակ, արդեն այդ տարածքը ապրելու համար դարձել է ոչ պիտանի, թունավոր: Նոր պոչամբարը դառնալու է լրացուցիչ եւս մեկ սպառնալիք առանց այդ էլ այդտեղ ստեղծված, առկա ծայրաստիճան վտանգավոր դրությունը», - «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում ասաց բնապահական, Հայաստանի կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանը՝ անդրադառնալով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի դիտարկումներին:

Նախօրեին լրագրողների համար կազմակերպված մեդիատուրի ժամանակ կոմբինատի գլխավոր տնօրեն Մհեր Պոլոսկովն ասել է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» նախատեսում է Արծվանիկի պոչամբարի շահագործումն ավարտել ժամկետից շուտ: Նրա խոսքերով Արծվանիկի պոչամբարը շահագործվում է խորհրդային տարիներից, այժմ շահագործման վերջին փուլն է: Պոլոսկովի խոսքերով պոչամբարը կարող են շահագործել առաջիկա 10-11 տարիներին, սակայն շահագործումը կավարտեն նախատեսված ժամանակից շուտ՝ 5 տարում: Ըստ նրա՝ պոչամբարի հետ կապված ամենակարեւոր հարցերից մեկն այս կառույցի կայունությունն ապահովելն է, որպեսզի կառույցը փակելուց հետո կոմբինատը կարողանա նախագծին համապատասխան ռեկուլտիվացիա իրականացնել:

«Մեր պրոյեկտով նախատեսվում է մոտ 40 մետր ավելացնել պոչամբարի բարձրությունը՝ հասցնելով վերջնական 960 նիշի: Պրոյեկտից շեղումներ չենք ունենցել: Նախագիծը գտնվում է շահագործման վերջնական փուլում», - ասել է Մհեր Պոլոսկովը՝ նշելով, որ ապագայում նախատեսում են պոչամբար ունենալ հանքից ոչ հեռու, ավելին՝ այդ տարածքում:

Հակոբ Սանասարյանը խիստ կասկածում է, որ պոչամբարի շահագործմանը դեռ 10-11 տարի կա: Նրա խոսքերով՝ կոմբինատը պոչամբարում այնքան պոչանք է լցրել,

որ արդեն վախենում են, որ մի քիչ էլ լցվելուց հետո գուցե նախագծայինից ավելի ստացվի: Հետեւաբար մտադիր են արդեն նոր պոչամբար կառուցել: «Սովորաբար հանքատերերը ավելի շատ հանքանյութ են վերամշակում, քան ցույց են տալիս, որն էլ ենթադրում է լրացուցիչ պոչանք, որը լցվում է պոչամբար:

Հետեւաբար, 5 տարի շուտ Արծվանիկի պոչամբարի շահագործումը դադարեցնելը, հավանաբար, հենց սրա հետ է կապված», - ընդգծեց Սանասարյանը:

Նշենք, որ 2016-ի դեկտեմբերին ԶՊՄԿ-ն թույլտվություն ստացավ հանքաքարի տարեկան արդյունահանումը հասցնել 22 մլն տոննայի: Այդ ժամանակ արդեն Արծվանիկի պոչամբարում կար 212 մլն խմ պոչանք, իսկ այս տարվա հունվարի դրությամբ այն արդեն հասել է 239.7 մլն խմ-ի, այսինքն՝ 2 տարում կոմբինատի պոչանքներն ավելացել են 27.7 մլն խմ-ով: Եվ սա միայն պաշտոնական թվերով, քանի որ ոչ պաշտոնական թվերով, ինչպես նշեց Սանասարյանը, ավելի շատ արդյունահանում է իրականացվում, քան ներկայացվում է:

Ինչ վերաբերում է նոր պոչամբարի կառուցմանը արդեն հանքավայրի մոտ, Սանասարյանի խոսքերով՝ իր չճշտված տեղեկություններով նրանք ցանկանում են հենց հանքախոռոչը դարձնել պոչամբար, ինչը ենթադրում է հենց Ողջի գետի եզրին նոր պոչամբար:

Նշենք, որ ԶՊՄԿ-ն նախկինում 3 պոչամբար է շահագործել Զանգեզուրի լեռնաշղթայից սկիզբ առնող եւ մինչեւ Արաքս հոսող Ողջի գետի ավազանում, որոնք կոնսերվացվել են դեռ խորհրդային տարիներին: Արծվանիկի պոչամբարը չորրորդն է ու ամենամեծը: Այն եւս Ողջիի ավազանում է: Պոչամբարը կառուցվել է 1970-ականների սկզբին: «Նոր պոչամբարի կառուցումը Ողջի գետի շրջանին նշանակում է՝ ամբողջությամբ ծանրաբեռնել գետը: Գետն առանց այդ էլ ծանրաբեռնված էր, քանի որ գործարանը հենց այդտեղ էր, հանքային փոշին ու մնացած ամեն ինչը լցվում էր գետ, բացի դրանից՝ հենց Քաջարան քաղաքում ար-

դեն կար մի պոչամբար, դրանից մի քիչ ներքե՝ Ողջիի վրա, Փխրուտի պոչամբարն է, որից ներքե էլ հենց Ողջիի պոչամբարն է՝ մոտ 70 միլիոն տոննա պոչանքով: Այսինքն՝ ընդհանրապես այդ տարածքը ոչնչացվում է, ապրելու համար դառնում է ոչ պիտանի: Ծահադիտական աշխարհը այսպիսին է», - նկատեց բնապահականը:

Կոմբինատի գլխավոր տնօրենը լրագրողների հետ զրույցում խոսել էր նաեւ Արծվանիկի պոչամբարում ռեկուլտիվացիայից՝ նշելով, որ իրենք նման մեծածավալ աշխատանք են կատարում: Նախ՝ հողի բերրի շերտը՝ սեահողը հանվում է եւ պահեստավորվում է, ապա ռեկուլտիվացիան կատարելիս սկզբում հողի ոչ բերրի շերտով են փակում, հետո՝ սեահողով: «Նախտված հողային տարածքները բերվում են այն վիճակին, որը եղել է բնության մեջ: Արվում է հատուկ մշակում եւ կանաչապատում: Վերջին 3 տարվա մեջ մենք ռեկուլտիվացրել ենք մոտ 35 հեկտար տարածք»:

Հակոբ Սանասարյանի խոսքերով՝ ռեկուլտիվացիա, այո, կատարվում է, բայց դա երբեք չի վերադարձնում տարածքի նախկին տեսքը: «Իրենք թող նայեն սրանից 10-15 տարի առաջ ռեկուլտիվացիա արված տարածքները՝ ակունքը քանդված են, եւ պոչանքը սփռվում է շրջակա միջավայր: Սոռաքեք, որ նախկին տեսքի բերել այդ տարածքները հնարավոր է: Ռեկուլտիվացիայից հետո, երբ այդտեղ հող է լցվում, ծառ է տնկվում, կանաչապատվում է, ապա իմացեք, որ որեւէ ծառի բերք օգտագործման պիտանի չէ, պտուղները թունավոր են, ածած խոտը անասունների համար պիտանի չէ, քանի որ ածում են պոչանքի մեջ եւ իրենց մեջ կրում են այն բոլոր թունաւոր նյութերը, ռադիոակտիվ տարրերը, որոնք պոչանքի մեջ են: Բացի դրանից, ես կարծում եմ, որ այնտեղ նաեւ ցրված ուրան է կա: Այնպես որ, որեւէ դրական սպասում ունենալ այդ տարածքներից, այլեւս հնարավոր չէ: Տարածքները ոչնչացվում են անդառնալիորեն», - եզրափակեց Հակոբ Սանասարյանը:

# Գուրգեն Եղիազարյան. «Երբ խոսում ենք կոռուպցիայից, առաջին կոռուպցիոն ռիսկերը հենց թաղված են մոլիբդենի մեջ...»

...Նիկոլի փայ Սիլվաները, մի Սիլվա չի, մինիմում 4-5 Սիլվա, սպասում են, երբ են գալու ցուցմունք տան, հենց-որ սա իշխանություն չեղավ, նենց բաներ են պատմելու Սիլվաները...

Մեկ օրինակ եմ բերում. հայտնի էր, որ Սերժի ժամանակ, ժողովուրդ ջան, թալանում էին, չէ՛, մոլիբդենը: Գրում են մի թիվ, ուրիշ թիվ տանում՝ եվրոպաներում վաճառում են: Եվ արդեն հայտնի է, որովհետեւ դա ծեծված խնդիր է, որ օֆշորում տանում են, մոլիբդենը վաճառում են տոննան՝ 2000 դոլարով. երկրորդ ձեռքի վրա վաճառում են վեց հազար, երրորդ ձեռքի վրա կարող է լինել ութ կամ տասը հազար:

Անցել է մեկ տարի ութ ամիս, ինչ այս իշխանություններն են, մեկ տարի ութ ամսում մի անգամ գոնե հետաքրքրվեիք մոլիբդենով, թե մոլիբդենով միայն քանի դոլար է մեր երկրից գողացվել՝ արդեն միլիարդի հասնող: Ինքն էլ է խոսել մոլիբդենի մասին, բայց մոռացել է արդեն: Կա-

րո՞ղ է, Նիկոլ, այդտեղ հարցեր կան: Կարո՞ղ է, քեզ ինչ-որ ջերմություն է հարորդում այդ օֆշորը: Բա ո՞նց իմանանք: Քո փայ Սիլվան ուշադիր նայում է քեզ, մի հատ ակնանցիդ օղ արա, վաղն այդ մոլիբդենը ցուցմունքի է վերածվելու քո դեմ: Երկրի ընդերքն ավիրում եք, մոլիբդենի 30 տոկոսը լցնում եք պոչամբարի մեջ, մնա, շատ, շատ թալանեք: Սա քո մեկ տարի ութ ամսվա ընթացքում առանձնահատուկ թափ ստացավ:

Երբ խոսում ենք կոռուպցիայից, առաջին կոռուպցիոն ռիսկերը հենց թաղված են մոլիբդենի մեջ, ինչն ինձնից դուք ավելի լավ գիտեք: Ոնց որ ձայն չես հանում կամ խելք չունես, ժիշտն ասած, կամ էլ՝ եթե խելք ունես, ուրեմն օգուտ ունես: Մի ասա՝ իմանանք: Որն է, խելք չունես, թե՞ օգուտ ունես:

**Քաղվածք տեսանյութից.**  
**հարցազրույց Գուրգեն Եղիազարյանի հետ, 27.11.2019 թ.**  
**Yerevan.today, 7or.am**

# Հեղափոխական իշխանության պայմաններում հանքերի սեփականատերերը իրենց նույն՝ լկտի կերպով են դրսևորում

«Դա շատ օրինակալի վարքագիծ է այսօրվա հանքարդյունաբերական ընկերությունների համար. ճանճը տոգում է՝ իրենք դատի են տալիս: Այդ վարքագիծը նպատակ ունի պարալիզացնելու, ծնշելու, քանի որ իրենք չունեն ժամանակի եւ ֆինանսական խնդիրներ՝ կարող են վարձել փաստաբանական գրասենյակներ եւ հարձակվել մեզ վրա», - «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում նշեց Բնապահականության եւ ընդերքի տեսչական մարմնի նախկին ղեկավար Արթուր Գրիգորյանը՝ անդրադառնալով Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացրած դատական հայցին՝ ընդդեմ «Առաջին լրատվական»-ի:

Մեր զրույցակցի խոսքով՝ նոր կառավարության օրոք ՏՄՊՊՀ-ն իրականացրել է մի համակենտրոնացում, որով թույլ է տվել, որ կիպրական ընկերությունը ձեռք բերի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում փայաբաժին ունեցող ընկերության ակտիվները. «Հետո պարզվում է, որ այդ կիպրական ընկերությունը փոխկապակցված է Արթուր Վանեցյանի հորեղբոր տղաների հետ: Հիմա այս ամբողջ շղթան բացահայտելու համար մենք պետք է ունենանք բավարար չափով ինֆորմացիա, թե ոչ: Պետք է ունենանք լուսաբանող լրատվամիջոց, թե՛ ոչ. հիմա այդ լրատվամիջոցն ինչպե՞ս լուսաբանի, որ մեկ բառ ավելի չխոսի»:

**1in.am, 21.11.2019թ.**

# Շրջակա միջավայրի նախարարությունը մերժել է ԶՊՄԿ-ի ջրօգտագործման թույլտվության հայտը, իսկ «Թեղուտ» ՓԲԸ-ին տրամադրել է ՋԹ երեք տարի ժամկետով

Շրջակա միջավայրի նախարարությունը մերժել է «Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի նոր ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը: Նախարարությունը բավարարել է «Թեղուտ» ՓԲԸ-ի ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը՝ տրամադրելով ընկերությանը ՋԹ երեք տարի ժամկետով: Այս մասին ի պատասխան ԷկոԼորի հարցմանը տեղեկացրեց Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի պաշտոնակատար Էդգար Փիրումյանը:

«Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով Ողջի, Սակքար, Փովարուտ, Ձագեձոր, Գեղի

գետերից եւ Գեղի գետի ջրամբարից նոր ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը շրջակա միջավայրի նախարարի 2019 թվականի նոյեմբերի 11-ի N381-Ա հրամանով մերժվել է:

«Թեղուտ» ՓԲ ընկերությանն արդյունաբերական նպատակով տրվել է N000133 (11.11.2019-11.11.2022) ջրօգտագործման թույլտվությունը՝ Դեբեդ գետից 296.5 լ/վրկ եւ դրենաժի լցակայաններից 8 լ/վրկ ջրառի ծավալով: Միաժամանակ հայտնում եմ, որ «Թեղուտ» ՓԲ ընկերությանը նախկինում տրված N000203 ջրօգտագործման թույլտվությամբ ջրառի ծավալ սահմանված է եղել Դեբեդ գետից 512 լ/վրկ, Շնող գետից 13.7 լ/վրկ, դրենաժային համակարգից 8 լ/վրկ», - նշված է Էդգար Փիրումյանի պատասխան նամակում:

# Իրական սեփականատերերի ռեգիստր. ի՞նչ է սպասվում Հայաստանում

**Ազգային ժողովը նոյեմբերի 13-ին երկրորդ ընթերցմամբ եւ մեքոդջությամբ ընդունվեց ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:**

Օրինագիծը մի քանի այլ փոփոխությունների հետ սահմանում է ընդերքը շահագործող կազմակերպությունների իրական սեփականատերերի գրանցման ռեգիստր ստեղծելու կարգը: Այս համակարգի ներդրման հարցը քննարկումների առիթ է Հայաստանում շուրջ 2 տարի: Քննադատությունները հիմնականում վերաբերում են օրենքի մի քանի կետերի, դրանց իրացմանն ու անորոշությանը:

Այսպես, ԱԺ ամբիոնից ելույթի ժամանակ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը, անդրադառնալով օրինագծին, նշեց, որ այն իրական սեփականատերերին բացահայտելու ոչ մի հնարավորություն չի տալու:

«Որեւէ սեփականատեր գրանցված չէ, բոլոր բաժնետերերը գրանցված են իրենց բաջանաղի, տղայի, խնամու եւ այլնի անուններով: Բովանդակությունը չի արտահայտում նպատակը», - հայտարարեց Բագրատյանը՝ հավելելով, որ այս կերպ պետությունն օրինականացնելու է նախկին իշխանությունների փողերի վաճառումը:

«Փաստերի ստուգման հարթակն» ուսումնասիրել է իրական սեփականատերերի ռեգիստրի վերաբերյալ հայկական շրջանակների քննադատություններն ու այս ոլորտում միջազգային փորձը:

«Ընտրվել են հանքարդյունահանող ընկերությունները, քանի որ Հայաստանում առավել խնդրահարույց է այս ոլորտի իրական սեփականատերերի հարցը, այստեղ առկա են կոռուպցիոն առավել մեծ սխեմաներ, եւ հազվադեպ են դեպքերը, երբ բացահայտվում են այս կազմակերպությունների իրական սեփականատերերը»:

### Ովքեր են իրական սեփականատերերը

Հանքերի իրական սեփականատերերի բացահայտման համար Հայաստանում ընդունված օրենքով իրական սեփականատեր է համարվում այն ֆիզիկական անձը, որն ունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի առնվազն 10 տոկոսի մասնակցություն կամ քվեարկության իրավունք, կամ տիրապետում է տվյալ կազմակերպության բաժնետեր կազմակերպությունների կապիտալի առնվազն 10 տոկոսի մասնակցությանը: Ընդ որում, նշվածը վերաբերում է ոչ միայն գրանցված բաժնետերերին, այլև ուղղակի եւ անուղղակի կերպով տվյալ կազմակերպությունը եւ դրա կապիտալը տիրապետողներին:

Եվրոպական միության կողմից 2015-ին ընդունված «Փողերի վաճառման դեմ» իրահանգի համաձայն՝ եվրոպական երկրներում գործում է առավել բարձր՝ 25 տոկոսի շեմ:

### Հայաստանում ռեգիստրի ներդրման նախապայմուտությունը. ինչու՞ են ընտրվել հենց հանքերը

### Քերը

2017-ին Հայաստանը դարձավ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) անդամ, ինչից հետո սկսվեց հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը: ԱՃԹՆ ստանդարտի համաձայն՝ անդամ երկրները պարտավոր են ստեղծել իրական սեփականատերերի հանրային ռեգիստրեր:

Մեկ տարի անց Հայաստանն իրական սեփականատերերի ռեգիստր ստեղծելու պարտավորություն ստանձնեց Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) գործողությունների 4-րդ քառամյա պլանի շրջանակում: Աշխատանքների մեկնարկը տրվել է 2018-ի նոյեմբերին, ավարտը նախատեսվում է 2020-ի դեկտեմբերին:

ԲԿԳ գործողությունների պլանում այս հարցի ներառումը հիմնավորվում է նրանով, որ թեպետ Հայաստանում գործող օրենսդրությամբ պետական պաշտոն զբաղեցնող անձի չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն իրականում առկա է այլ պատկեր: Թաքնված սեփականատերերը նպաստում են երկրում կոռուպցիայի տարածմանը:

Ընտրվել են հանքարդյունահանող ընկերությունները, քանի որ Հայաստանում առավել խնդրահարույց է այս ոլորտի իրական սեփականատերերի հարցը, այստեղ առկա են կոռուպցիոն առավել մեծ սխեմաներ, եւ հազվադեպ են դեպքերը, երբ բացահայտվում են այս կազմակերպությունների իրական սեփականատերերը: 2004-ին պետականից մասնավոր դարձած Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի

բաժնեմասերի մի մասը, օրինակ, կապվում է 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի փեսայի՝ Միքայել Մինասյանի անվան հետ: Այս թեմայով հետաքննություն է կատարել «Սիվիլնեթը»: Ըստ դրա՝ հանքի բաժնետեր կազմակերպություններից մեկի բաժնեմասերը պատկանել են Մինասյանի թիզնեսների կառավարիչ Լեոնիդ Արեւշատյանի ազգականներից՝ մեկին: Քիչ չեն քննարկումները նաեւ մյուս հանքերի սեփականատերերի վերաբերյալ: Այսպիսի ռեգիստրի ստեղծման նպատակը կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի եւ փողերի վաճառման դեմ պայքարն է: Ուստի, ռեգիստրի հանրային լինելը հնարավորություն պիտի տա լրագրողներին եւ հետաքրքրված անձանց՝ սեփական հետաքննություններ անցկացնելու ու բացահայտելու թաքնված իրական սեփականատերերին:

ԱԺ-ում Սերգեյ Բագրատյանի դիտարկմանը, թե ռեգիստրը, միեւնոյն է, չի տալու սպասված արդյունքը, քանի որ որպես իրական սեփականատեր կարող են գրանցվել հասարակ քաղաքացիներ, օրինագծի հեղինակ՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների

նախարարի տեղակալ Լիլյա Շուշանյանը պատասխանեց, որ ռեգիստրում գրանցվող անձանց տվյալները պետք է հիմնավորված լինեն: Հետեւաբար՝ ռեգիստրում որպես իրական սեփականատեր ներկայացված անձի տվյալները պետք է գտնե բացահայտ կասկածներ չառաջացնեն: Սակայն սա նաեւ չի նշանակում, որ ռեգիստրն ամբողջությամբ բացահայտելու է իրական սեփականատերերին:

Լրագրողների հետ զրույցում արդարադատության նախարար Ռուստամ Բաղասյանը, սակայն, հայտարարեց, որ հետագայում ռեգիստրում հրապարակվելու են բոլոր կազմակերպությունների իրական սեփականատերերի մասին տեղեկություններ՝ անկախ գործունեության ոլորտից:

Մյուս խնդիրը, որին, ըստ քննադատների, բախվելու է նոր օրենքը, ընտրված 10 տոկոսի շեմն է: Կարծիք կա, որ այն չափազանց բարձր է, եւ սեփականատերերը կարող են բաժանել ունեցվածքն ավելի փոքր մասերի ու թաքցնել իրենց ինքնությունը:

Նվազագույն շեմն ընդհանրապես հանելու օրենսդրական նախագիծ էր ներկայացրել ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը, սակայն կառավարությունը բացասական եզրակացություն է տվել նախագծին:

Հիմնավորումն այն էր, որ նման շեմերի անհրաժեշտության մասին խոսում են նաեւ միջազգային կառույցները, իսկ մի շարք երկրներում, ի տարբերություն Հայաստանի, գործում է 25 տոկոսանոց շեմ: Մյուս կողմից, ըստ օրինագծին դեմ արտահայտվողների՝ 10 տոկոսից ցածր շեմը կարող է այնպիսի տվյալների հրապարակման պատճառ դառնալ, որոնց ուսումնասիրությունը ոչինչ չի տա:

### Միջազգային փորձը

Հայաստանում նվազագույն 10 տոկոսի շեմն ընդունելը եւ անգամ քննարկումները՝ այն ամբողջությամբ հանելու վերաբերյալ, «Ինթերնեյշնլ» կազմակերպության Գերմանիայի ներկայացուցչության փորձագետ Ստեփան Օմեն դրական է գնահատում: Փորձագետը Fir.am-ի հետ զրույցում ասաց, որ վաղ թե ուշ Գերմանիան եւս կանցնի նվազագույն շեմի փոփոխման քննարկումների:

2017-ին ստեղծված գերմանական ռեգիստրը փակ է հանրության համար. ռեգիստրին հասանելիություն ունեն միայն իրավապահ մարմինները եւ լրագրողները: Օմենն ասում է, որ ըստ տեղացի լրագրողների՝ ռեգիստրի օգտակարության գործակիցը շատ ցածր է, բայց այժմ Բունդեսբազում քննարկվում են օրենքի նոր փոփոխությունները, որոնք նախատեսում են ռեգիստրի հանրայնացում, Open Data ֆորմատի օգտագործումն եւ այլն:

Իրական սեփականատերերի ռեգիստրի լավագույն օրինակներից է Մեծ Բրիտանիայում գործող օրենքը (2015): Իրական սեփականատերերի՝ աշխարհում առաջին հանրային ռեգիստրը թողարկվել է 2016-ին: Հանրային հասանելիությունից բացի, բրիտանական ռեգիստրն ունի որոնման լավ մշակված համակարգ, ու հնարավոր է ներբեռնել անհրաժեշտ ինֆորմացիան: Թեպետ Բրիտանիայի ռեգիստրն օրինակ է այլ երկրների օրենքների համար, այստեղ եւս դրական գնահատականներ կողքին քիչ չեն քննարկումները, որ օրենքը մեծ հնարավորություններ չի տալիս՝ բացահայտելու կազմակերպությունների իրական սեփականատերերին:

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Կապանը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք. շնորհավորում ենք



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն ամփոփել է «ՀՀ 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի արդյունքները: Դեկտեմբերի 2-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Գեորգ Լոռեցյանը հայտարարել է, որ մրցութային հարթել է Կապան քաղաքը, որտեղ եկող տարի նախարարությունը կիրականացնի տեղական եւ միջազգային երիտասարդական ծրագրեր՝ դրանցում ներգրավելով համայնքի եւ մարզի երիտասարդներին ու երիտասարդական կազմակերպություններին:

2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի կոչման համար հայտ էին ներկայացրել Արմավիր, Կապան, Հրազդան, Գավառ եւ Գորիս քաղաքային համայնքները: Հաղթողը որոշվել է կարծ հաղորդագրությամբ (sms) քվեարկության եւ հայտերի փորձագիտական գնահատման՝ տեղում ուսումնասիրությունների արդյունքում: Նոյեմբերի 5-25-ը անցկացված sms քվեարկությամբ ամենաշատ ձայները ստացել է Հրազդանը (2041 ձայն), երկրորդ տեղում Կապանն է (1335), երրորդում՝ Արմավիրը (822), որին հաջորդել են Գավառը (674) եւ Գորիսը (391): Մրցույթի կազմակերպիչն է փորձագետների՝ հայտատու քաղաքների մարզական, մշակութային, ժամանցի եւ այլ հաստատություններ կատարած այցելությունների արդյունքում նախապատվությունը տրվել է Կապանին: Փոխնախարար Գեորգ Լոռեցյանը նշել է, որ արդյունքների համադրումը կատարվել է հնարավորինս անաչառ:

«Ընտրվել է իրապես ամենաարժանի քաղաքը: Կապանն ունի ռեսուրսներ եւ երիտասարդական ոլորտում ակտիվ աշխատանքների փորձ: Մրցույթի պահանջ չի եղել, որ հաղթող քաղաքն ունենա շատ զարգացած երիտասարդական թաղաքականություն, բայց տվյալ համայնքում մրցույթի միջոցով երիտասարդության ոլորտը որակական նոր աստիճանի բարձրացնելու համար անհրաժեշտ է որոշակի հիմք», - ասել է Գ. Լոռեցյանը՝ նշելով, որ գնահատվել են ոչ միայն քաղաքի ռեսուրսները, այլև ընդհանուր հայտը՝ ծրագրային առաջարկներով եւ համագործակցության պատրաստ կազմակերպություններով:

ՀՀ ԿԳՄՍ փոխնախարարի խոսքով, քաղաքի համար սա լավ հնարավորություն է. «Ուրախսիր է, որ մրցութային հարթել է Հայաստանի հետազոտող մարզ ներկայացնող քաղաքը: Սա կնպաստի Կապանի եւ ընդհանուր Սյունիքի մարզի երիտասարդական քաղաքականության ակտիվացմանը եւ տարիտարակա հոսքերի շատացմանը: Նախարարությունը խրախուսելու է համայնքներում, հատկապես երիտասարդական մայրաքաղաքում, երիտասարդական նախաձեռնությունների ակտիվացմանը եւ աջակցելու է տեղական կազմակերպություններին», - ասել է Գ. Լոռեցյանը:

Տարվա երիտասարդական մայրաքաղաք մրցույթի անցկացմամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նպատակ ունի նպաստել հանրապետության համայնքների համաչափ զարգացմանը, խթանել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում համայնքների միջեւ բարեխիղճ եւ գործընկերային հարաբերությունները՝ ինչպես տեղական եւ հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում, խրախուսել համայնքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակելու արդյունավետ երիտասարդական քաղաքականություն, աջակցել մարզերում երիտասարդական կազմակերպությունների եւ ենթակառուցվածքի առաջխաղացմանը:

edu.am





Ընթացքում մարզպետ Հակոբյանը մի քանի անգամ մատնանշում է իր կնոջ կողմից ղեկավարվող «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության գործունեության մասին, անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք մարզպետ Հակոբյանը չի օգտագործել իր պաշտոնական դիրքը «Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի» կամ «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի բարեգործական հիմնադրամի» ֆինանսական միջոցները անձնական կամ խմբային շահերի սպասարկման համար օգտագործելու նպատակով (ներկայացվում է մարզպետի կնոջ՝ Էլիզաբետ Պետրոսյանի հայտարարագիրը՝ սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ եկամուտների վերաբերյալ):

Կից ներկայացվող նյութերից հետեւում է, որ այդ միջոցները կարող էին ուղղակի դիտավորյալմբ օգտագործվել այլ կազմակերպությունների եւ անձանց դեմ՝ վերջիններիս վարկաբեկող հոլովակների պատրաստման եւ տարածման, համակարգչային (հաքերային) հանցագործությունների կատարման համար՝ ելնելով անօրինական խմբային շահերից եւ կոռուպցիոն բնույթի այլ նպատակներից»:

*Ներկայացված քաղվածքները, կարծում ենք, բավարար են՝ հասկանալու, թե ինչ հանգամանքներ են ընկած տվյալ քաղաքացիական գործի հիմքում:*

Հասկանալ կարելի է նաեւ, թե ինչու է Վահեն փորձել այդ ամենը գրպարտություն որակել, այն էլ՝ դատարանի ուժով:

Սակայն...  
2019 թ. ապրիլի 18-ի վճռով երեսան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է Վահենի հայրը:

Դատարանի վճռի դեմ երբեմնի մարզպետը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է ՀՀ քաղաքացիական դատարանի 2019 թ. օգոստոսի 29-ի որոշմամբ:

Երբեմնի մարզպետը հետո բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը՝ ներկայացնելով վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանն էլ (2019 թ. նոյեմբերի 13-ին) կայացրել է որոշում՝ Վահեն Հակոբյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:

3. Գ. Հասկացանք՝ Վահեն Ա. Հակոբյանի պահանջը մերժվեց, որը բողոքարկման ենթակա չէ այլեւս, բայց...

Գլխավոր հարցը շարունակում է մնալ օդում կախված եւ անպատասխան. **Է՞րբ է մաքրանշված գումարը վերադարձվելու Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամ, որ պարզեցվել էր մասնավոր մի հիմնադրամի, որի անունն է «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի բարեգործական հիմնադրամ»:**

Ընդ որում՝ երկու հիմնադրամի նախագահն էլ տվյալ պահին եղել է Սյունիքի մարզպետի աթոռը զբաղեցնող պարոնը:

2. Ըստ ՀՀ կառավարության 2016 թ. դեկտեմբերի 15-ի N 1299-Ն որոշման՝ **«Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանն է»:**

3. Գործի մյուս մանրամասներին կարող եք ծանոթանալ «datalex» տեղեկատվական համակարգում:

**«Սյունյաց երկիր»**

## Ստորագրվել են Մեղրի եւ Զուլջեւան համայնքների զարգացմանն ուղղված դրամաշնորհային պայմանագրեր

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում Հայաստանում Ճապոնիայի դեսպանության հետ ստորագրվել են «Մեղրիի մանկապարտեզում արեային էներգիայով ջեռուցող համակարգ տեղադրելու» եւ «Զուլջեւան գյուղում խմելու ջրի մատակարարման» դրամաշնորհային պայմանագրեր:

Պայմանագրերը ստորագրել են մի կողմից ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադան, մյուս կողմից՝ Մեղրիի մանկապարտեզի տնօրեն Սյուզան Սարգսյանը եւ «Զարգացման համայնքային կենտրոն» ՀԿ տնօրեն Հասմիկ Ազիբեկյանը: Ստորագրմանը ներկա են եղել «Իմ քայլը» հիմնադրամի ներկայացուցիչները:

Այդ մասին տեղեկացնում է ՀՀ ՏԿԵՆ պաշտոնական կայքէջը:

ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը նախա-

րար Սուրեն Պապիկյանի եւ նախարարության անունից ողջունել է դեսպանության ներկայացուցիչներին եւ շնորհակալություն հայտնել Հայաստանում իրականացվող թիրախային ծրագրերին ակտիվ մասնակցության համար: Վ. Տերտերյանը կարեւորել է սահմանային երկու համայնքներում նախատեսվող ծրագրերը եւ վստահություն հայտնել, որ համագործակցության այն ձեւաչափը, որը դրված է ծրագրերի իրականացման հիմքում, արդյունավետության առաջնային նախապայմաններից է լինելու, եւ հաջողություններ է մաղթել հետագա աշխատանքներում:

Իր հերթին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադան շնորհակալություն է հայտնել նախարարությանն աջակցության համար եւ ընդգծել ծրագրերի իրականացման ընթացքում նախարարության հետ



համագործակցության կարեւորությունը: Դեսպանը պատահական չի համարել համայնքներին ուղղված պայմանագրերի ստորագրումը նախարարությունում անցկացնելու նախաձեռնությունը, քանի որ Հայաստանի ապագան տեսնում է համայնքային եւ տարածքային զարգացման, համայնքային ենթակառուցվածքների բարելավման մեջ: «Մեղրիի մանկապարտեզում արեային էներգիայով ջեռուցող համակարգ տեղադրելու» դրամաշնորհային ծրագիրը (51,154 ԱՄՆ դո-

լար) իրականացվելու է «Իմ քայլը» հիմնադրամի նախաձեռնությամբ եւ նպատակ ունի Մեղրիի միակ մանկապարտեզում տեղադրել արեային էներգիայի համակարգ եւ ջրատաքացուցիչ: Համակարգը հնարավորություն կտա մանկապարտեզին խնայել էներգիա եւ ստանալ տարեկան 940-1050 դոլար եկամուտ՝ ավելցուկային էներգիան պետությանը վաճառելով:

**ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն**



## Հրաժեշտ Կրկնի աշնանը

Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնում տեղի ունեցավ ցերեկույթ՝ «Աշնան վերջին մեղեդին» խորագրով, որ կազմակերպել էր գրադարանապարտի Հասմիկ Թորոսյանը: Սրահում ներկայացված էին Կապանի արվեստի մանկական դպրոցի գեղարվեստի բաժնի սաների գեղանկարչական աշխատանքները՝ աշնան թեմաներով: Նույն կրթօջախի սաները հանդես եկան համերգային փոքրիկ ծրագրով: Արմինե Օհանջանյանը, Անի Հակոբյանը, Ժաննա Հակոբյանը, Հայկ Գալստյանը, Անի Էլչիբեկյանը երաժշտական տար-

լիացրեց բաժնում տիրող աշնանային տրամադրությունը:

Գեղարվեստական մասի ավարտից հետո արվեստի մանկական դպրոցի տնօրեն Մարինա Նահապետյանը ներկաներին մաղթեց, որ աշունը սեր, երջանկություն, խաղաղություն բերի եւ բովանդակալից նոր միջոցառումներ մաղթեց սպասարկման բաժնի կոլեկտիվին: Իսկ մարզային գրադարանի տնօրեն Լիանա Գասպարյանը շնորհակալություն հայտնեց արվեստի մանկական դպրոցի մանկավարժներին եւ սաներին՝ համագործակցության համար: Մարինա Նահապետյանը



բեր գործիքներով հնչեցրին Կոմիտասի, Գուսան Շահենի, Գեղունի Չոբանի ստեղծագործություններից, ուրիշները հանդես եկան ասմունքով: Ցերեկույթը եզրափակվեց դպրոցի թատերարվեստի բաժնի սաների ելույթով, ովքեր ներկայացրին «Աշնան թեմերով» գրական-երաժշտական համադրույթը, որ

դպրոցի սաների գեղանկարչական աշխատանքներից մեկը նվիրեց գրադարանի կոլեկտիվին:

Ցերեկույթին մասնակցում էին նաեւ կապանցի ստեղծագործողներ, ովքեր հանդես եկան սեփական ստեղծագործությունների ասմունքով:

**ՎԱՐՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Էկոանկյունը կնպաստի բնապահպանական դաստիարակությանը

«Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան»-ի ֆինանսավորմամբ «Ծիածան առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է «Էկոպրոյեկտային իրականացում եւ էկոանկյունների հիմնում Կապան եւ Զաջարան համայնքների դպրոցներում» ծրագիրը, որի մեկնարկը տրվել էր հունիսին: Ծրագրի շրջանակում վրանային էկոամբար էր կազմակերպվել Սոսիների պուրակում, Կապանի եւ Զաջարանի վեց դպրոցում ձեռնարկվել են էկոանկյուններ, Կապանի թիվ 5 հիմնական դպրոցում՝ էկոպուրակ: Ծրագրի շրջանակում նշված դպրոց-

նյանը շնորհակալություն հայտնեցին «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի, «Սոստոպի» հասարակական, բնապահպանական կազմակերպության միջոցառմանը ներկա ներկայացուցիչներին, էկոլոգիական պուրակի ստեղծմանը նպաստած բոլոր անձանց: Ի դեպ, համոզմունք հայտնվեց, որ էկոպուրակն ի վերջո կվերածվի էկոպարոցի: Ի փաստումն այս ամենի՝ էկոպուրակում տնկվեց խորհրդանշական եղենի:

Միջոցառման մասնակիցներն այնուհետեւ եղան Գեղի միջնակարգ դպրոցում, որտեղ էկոծրագրի շրջանակում բնապահպանական



ների կենսաբանության ուսուցիչները վերապատրաստում են անցել խնդրո առարկայի՝ բնապահպանությանն առնչվող:

Կապանի թիվ 5 հիմնական դպրոցում տեղի ունեցավ էկոպուրակի բացման արարողություն: Այն սկսվեց դպրոցականների շուրջապարով, այնուհետեւ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի Անուշ Արզումանյանը նորաստեղծ էկոպուրակում անցկացրեց հարցուպատասխան, անորադարձ եղավ հայարվեստագետների ստեղծագործություններում բնության պատկերմանը: Բնապահպանական բաց դասից հետո «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը եւ Կապանի N 5 հիմնական դպրոցի տնօրեն Սիրանուշ Հարություն-

անկյուն է ձեռնարկվել: Կրթօջախի աշակերտները ներկայացրին «Իշխանը» բեմադրությունը, որում շոշափվում էին Սեանա լճի բնապահպանական խնդիրները:

Ի դեպ, Գեղի միջնակարգ դպրոցում մի հաճելի նորության ակնատես եղանք. կրթօջախի ճաշարանը ժամանակակից պայմաններին համապատասխան նորոգվել է «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի ֆինանսավորմամբ՝ «Սոստոպի» բնապահպանական հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի շրջանակում կառուցվել է ջերմոց, որում աճող բանջարեղենը կօգտագործվի աշակերտներին տրվող սննդի մեջ:

**ՎԱՐՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ**





# Գյուղից պետք է լավաշի հոտ գա...

**Քարաշենում ամեն քայլափոխի երեխաների հանդիպեցինք. նրանք ուրախ, աշխույժ ճովողուկով բնակավայրը դարձրել են կենդանի, առողջ օրգանիզմ: Ոմանք խաղում էին, ոմանք դպրոցից փուն դառնում՝ քննարկելով այդ օրվա անցուդարձը: Իսկ նրանցից մեկը՝ սիրունապես մի աղջնակ, բարձր ձայնով ասում էր, որ ուզում է մայրենի լեզվի ուսուցչուհի դառնալ. ուրեմն Քարաշենում ուսուցիչը մեծ հարգանք ու պարիվ ունի, որ բիզնեսի այս դարաշրջանում աղջնակը եւ նրա նման շաք-շաքերը երազում են ուսուցիչ դառնալ, այն էլ՝ հայոց լեզվի:**



Ներդրածի 30 տոկոսն է ստացել: Բնակավայրում խոշոր եղջերավոր անասուններ պահողներ կան, նրանք կաթը հանձնում են կաթի մթերման կետերին: Վերջիններս, սակայն, բավականին ուշացումով, ձգձգումներով են վճարում մթերած կաթի դիմաց: Քարաշենցիների համար ամենաեկամտաբերը ոչխարաբուծությանը զբաղվելն է: Նրանք կարողանում են քիչ ծախսումներով ավելի շատ եկամուտ ստանալ, հատկապես մեծ պահանջարկ ունեն գառները. մեկ գառը վաճառում են (միջին հաշվով) 40 հազար դրամով, իսկ ապրիլ-մայիս ամիսներին 13-14 կգ քաշ ունեցող գառները վաճառում 45 հազար դրամով: Ցավալին այն է, որ բուրդը պահանջարկ չունի, Գյումրիից եկողները 500-1000 կգ բրդի դիմաց վճարում են ընդամենը 20-30 հազար դրամ: Դրա համար

էլ, ինչպես ամենուր, քարաշենցիները նույնպես բուրդը թափում-վառում են: Բնակավայրում արտագնա աշխատանքի մեկնողների թիվը հաշվելու համար մեկ ձեռքի մատներն էլ բավական են: Քարաշենի դպրոցում սովորում է 81 աշակերտ, կրթօջախն ուսուցիչների պակասը լրացնում է Գորիսից եկող մանկավարժների հաշվին: Շրջանավարտներից ամեն տարի բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են 4-5 հոգի. դա բացատրվում է ոչ թե աշակերտների գիտելիքների ոչ բավարար լինելով: Բուհ դիմողների նման սահմանափակ քանակի պատճառն այն է կամ բացատրվում է նրանով, որ ավարտելուց հետո բնակավայրում համապատասխան աշխատանք չեն գտնում եւ մտածում

են՝ ինչու փող ու ժամանակ կորցնել, երբ այդ դիպումը չի դառնալու քո ապրելու միջոցը:

Չամայնքների խոշորացումից հետո Քարաշենը Տեղ համայնքի մեջ ներառվեց: Վարչական ղեկավար նշանակվեց Գառնիկ Շահնուբարյանը (լուսանկարում), ով մինչ այդ Քարաշենի գյուղապետն էր, մոտ 14 տարի՝ 2002-2016 թթ.:

*Չամայնքների խոշորացումից հետո լուծվեց բնակավայրի փողոցների գիշերային լուսավորության հարցը, կոյուղու կիսատ-պռատ ներքին ցանցն ամբողջական տեսք ստացավ. ասում է Գառնիկ Շահնուբարյանը. - 11 փողոցում փոսային լցման աշխատանքներ են իրականացվել:*

Քարաշենում կան նաեւ խնդրահարույց հարցեր: 25 տարուց ավելի է՝ Քարաշենի փողոցները մանկապարտեզ չեն հաճախում. շենքը վթարային է:

Այստեղ խնդիր է նաեւ ոռոգումը: Տարիներ առաջ Քարաշենը Կուրաթի գետից պոմպերի միջոցով ջուր էր ստանում, հիմա դրանք շարքից դուրս են եկել եւ այգիները, բանջարանոցները մնացել են առանց ոռոգման:

Մի փաստ էլ ցավով նշեց վարչական պատասխանատուն թոնիրները հուշ են դարձել, տան տիկիները գերադասում են լավաշը թխել էլեկտրական վառարանի վրա:

*Շամանակը փոխում է մարդկանց կենցաղը, տեխնիկական զարգացումը տանում է նրան, որ հեշտանում է մարդկանց աշխատանքը, տան տիկիներն էլ... - խոսքս ընդհատում է Գառնիկ Շահնուբարյանը, ասելով.*

*- Չամամիտ եմ ձեզ հետ, բայց թոնրի կալաշի համն ու հոտն ուրիշ է, երբ գյուղում մեկը լավաշ հաց էր թխում, հացի բույրը տարածվում էր ամենուր, իսկ հիմա թխելու ժամանակ տնից էլ լավաշի հոտը չի զգացվում: Գյուղից պիտի հացի բույրն անպակաս լինի, դրանով է գյուղը գյուղ եւ գյուղը դրանով է տարբերվում քաղաքից:*

**Չ.Գ. Քարաշենի ոռոգման ջրի մասին մեր հարցմանն ի պատասխան՝ Տեղի համայնքապետ Ներսես Շարունցն ասաց. «Ոռոգման ջուր Քարաշեն հասել է անցյալ դարի 90-ական թվականներին: Ոռոգման համակարգից հիմա հետքն էլ չի մնացել, այն ամբողջովին բացակայում է: Իսկ նորի կառուցումը մեծ գումարների հետ է կապված»:**

**ԱՎԱՐԳ ՄԵՏՐՈՂՅԱՆ**

## Սյունիքը հրաժեշտ տվեց իր զինվոր գավակին՝ սպասելով մահվան հանգամանքների բացահայտմանը



2019 թ. նոյեմբերի 29-ին հարյուրավոր հուղարկավորներ էին հավաքվել Գորիսի տարածաշրջանի Տանձատափ գյուղում:

Չավաքվել էին վերջին հրաժեշտը տալու Չայոց ազգային բանակի լավագույն զինվորիներից մեկին՝ Վահան Մուշեղյանին:

Վահանը բանակ էր զորակոչվել 2019 թ. հունվարին:

Մոտ մեկ տարվա ծառայության ընթացքում իրեն դրսևորել էր դրականորեն, որեւէ բողոք կամ զանգաստ չէր ունեցել:

Ըստ Տաթևի համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանի՝ նրա ծառայությունից գոհ էին հրամանատարները:

Մահվանից օրեր առաջ էին մայրը, եղբայրը, ընկերները տեսակցության գնացել Վահանին, ով բարձր տրամադրություն ուներ եւ սիրով էր կատարում իր պարտքը հայրենիքի հանդեպ:

Նրա դին՝ ծառից կախված վիճակում, հայտնաբերվել էր նոյեմբերի 26-ին՝ ժամը 9:00-ի սահմաններում, Դիլիջանի ուսումնական կենտրոնի տարածքում:

Հուղարկավորությանը ներկա էին Չայաստանի Չանրապետության պաշտպանության նախարարության, Սյունիքի զինկոմիսարիատի, ինչպես եւ զորամասի ներկայացուցիչներ:

Չայոց բանակի զինվորին վերջին հրաժեշտը տալու եւ նրա ընտանիքի անդամներին, հարազատներին ու ծառայակիցներին ցավակցելու համար Տանձատափ էր ժամանել նաեւ Սյունիքի մարզպետ, գեներալ-լեյտենանտ Յունան Պողոսյանը:

*«Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Ռոբերտ Մուշեղյանին եւ տիկին Անուշին՝ ծանրագույն կորստի՝ սիրելի որդու ողբերգական մահվան կապակցությամբ:*

*Ցավակցում ենք նաեւ Տաթևի համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանին, համայնքի եւ հատկապես Տանձատափ գյուղի բնակիչներին՝ Վահան Մուշեղյանի առեղծվածային մահվան կապակցությամբ:*

**«Սյունյաց երկիր»**



վարության եւ անսանապահության: Ընթացք էին ստանում գյուղերի սոցիալ-կենցաղային խարժեղը, նրանք դառնում էին ավելի շեն ու բարեկարգ: Լիարժեք աշխատում էին նախադպրոցական եւ դպրոցական հաստատությունները, սպասարկող հիմնարկները եւ այլն:

Չասկանայի է, որ միանգամից հիմա հնարավոր չէ գյուղերում ոչ գյուղատնտեսական բնույթի արտադրություն բացել: Բայց տեղերում արտադրվող մթերքների հիմքի վրա մշակող փոքր ձեռնարկություններ ստեղծելը ոչ միայն իրական է, այլ նաեւ խիստ պահանջված՝ որպես առաջին քայլ:

Խնձոր, տանձ, դդում, բանջարեղեն՝ լուրի, վարունգ, շուշան եւ այլն, մշակելու եւ սպառողներին մերձեցնելու համար հնարավոր եւ հիմնավորված է ամենաքիչը վեց տեղում

նման կետեր բացելը: Դրանց համար մեծ գումարներ պետք չեն: Չավարկ, իհարկե, չեն արել, բայց եթե մի փոքր ՅԷԿ-ի համար տրվող վարկային գումարն ուղղվի այդպիսի նպատակի՝ Սյունիքի մարզում հարցն ամբողջությամբ կլուծվի, գուցե մի բան էլ ավելանա: Մեծ ձեռնարկություններին դեմ չեմ, բայց հեռավորության եւ շատ այլ պատճառներով գյուղի բնակիչը չի կարողանում իր արտադրածը հանձնել նրանց: Այս տարի գյուղացին հսկայական վնասներ է կրել հենց այդ պատճառով՝ չի կարողացել իրացնել ունեցած առատ բերքը: Դրա, ինչպես նաեւ այն բանի համար, որ նրանում գյուղի մարդն աշխատի, հարկավոր է այդ արտադրությունը դնել հենց իր կողքին: Այսպիսի լուծման առավելությունները շատ-շատ են եւ պահանջը կա ողջ հանրապետությունում: Նույնը վերաբերում է նաեւ անասնապահական մթերքների մշակմանը:

Նման ձեռնարկությունները՝ լինելով փոքրածավալ եւ քիչ ծախսատար, մեծ օգուտներ կբերեն գյուղացուն ու գյուղին:

Եթե քաղաքը երկրի միջնաբերդն է, ապա գյուղը նրա սահմանները պահող ամրոցն է: Չարկավոր է, որ դրանք միշտ էլ պատշաճին ամրացված, զգաստ ու կանգուն լինեն, որ երկիրն իրեն անվտանգ եւ պաշտպանված զգա: Նշված առումով այսօրվա դրական անչափ քիչ է:

Գյուղական բնակչության արտագաղթի կանխման ճանապարհը սա է:

Եվ ոչ միայն գյուղական: Ընդհանուր առմամբ, եթե ցանկանում ենք կանխել արտավար երեւոյթը, պետք է իրականացնել համալիր միջոցառումներ՝ օրենսդրության պարզեցման ու կատարելագործման, հարկային ու մաքսային ծնշումների սեղմացման, ներդրողների պաշտ-

պանվածության ու շահագրգռվածության բարձրացման ուղղությամբ, որ աշխատանքները բացվեն եւ հայ մարդը մնա իր երկրում: Որպեսզի նաեւ երկիր վերադարձողներ լինեն: Չպետք է մոռանալ, որ ինչ էլ լինի՝ մեզնից յուրաքանչյուրը ցանկանում է արժանապատիվ աշխատանքով բարեկեցիկ եւ ապահով պահել իր ընտանիքը, իր երեխաներին: Երբ դա նրան չի հաջողվում, ոչինչ եւ ոչ ոք չի կարող կանգնեցնել ընտանիք կերակրողին: Նա առնում է գաղթողի ատելի ցուպը եւ իրեն նետում դրսի հորձանուտը՝ որ ինչ գնով էլ լինի՝ հաց հասցնի ընտանիքին: Նման մարդուն չես կարող մեղադրել:

Մեր նման երկրի ղեկավարի գլխավոր անելիքը սա պետք է լինի: Չարցի լուծումը բանալի կլինի նաեւ երկրի առաջ ծառայած մյուս խնդիրները հաղթահարելու եւ նրա զարգացումն ապահովելու համար:

